**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան                                                                 10-ը հունիսի 2019թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան,
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ռուստյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, կապիտան Վ. Բարսեղյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

***« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Գ. Տերյան)
1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Տերյան)
**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Օբորոն տեքստիլ» ՍՊԸ |
| 2 | «Սպորտ Սիթի» ՍՊԸ |
| 3 | Ա/Ձ Աննա Սահակյան |
| 4 | «ԳԴԱԿ» ՍՊԸ |
| 5 | «Էյչ Բի Էն» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Տերյան)
2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ Ա/Ձ Աննա Սահակյան կողմից հավելված 2.1, որը հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 17.06.2019թ. ծանուցել մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը և նիստը շարունակվել է:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 5 մասնակից.

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քան ակը | Նախահ աշվ. գումարը | 1-ին տեղ զբաղեցնող մասնակից | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Կանիտել | կգ | 0.3 | 1,500,000 | «ԳԴԱԿ» ՍՊԸ | 1,200,000 | 1,440,000 | | | |
| 2 | Մարզական կոստյում | լ-կ | 8 | 120,000 | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 89,600 | | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 96,000 | 115,200 |
| 3 | Մարզական կոստյում /կարճ/ | լ-կ | 8 | 80,000 | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 59,200 | | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 66,400 | 79,680 |
| 4 | Մարզական կոշիկներ | զույգ | 8 | 112,000 | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 82,400 | | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 92,800 | 111,360 |
| 5 | Լոգոյով մարզական շապիկներ | հատ | 160 | 800,000 | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 544,000 | | «Էյչ Բի Էն» ՍՊԸ | 624,000 | |
| | | | | | | | | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 664,000 | 796,800 |
| 6 | Լոգոյով գլխարկներ | հատ | 160 | 480,000 | «Էյչ Բի Էն» ՍՊԸ | 192,000 | | Ա/Ձ Աննա Սահակյան | 368,000 | |
| | | | | | | | | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 384,000 | |
| | | | | | | | | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 392,000 | 470,400 |
| 7 | Մրցավարների թևկապներ | հատ | 30 | 73,500 | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 57,000 | | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 59,400 | 71,280 |
| | | | | | | | | «Էյչ Բի Էն» ՍՊԸ | 66,000 | |
| 8 | Մասնակիցների կրծքահամարներ | հատ | 80 | 224,000 | «Էյչ Բի Էն» ՍՊԸ | 136,000 | | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 176,000 | |
| | | | | | | | | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 182,400 | 218,880 |
| 9 | Վազքուղու տարանջատման պարան | մետր | 2,000 | 660,000 | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 536,000 | 643,200 | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 640,000 | |
| 10 | Կոստյում սպորտային, ամառային | լ-կ | 100 | 1,200,000 | «Սպորտ Սիթի» ՍՊԸ | 940,000 | | «Օրորոն Տեքստիլ» ՍՊԸ | 980,000 | 1,176,000 |
| 11 | Սեղմակ պլաստմասե | հատ | 1300 0 | 260,000 | «Էյչ Բի Էն» ՍՊԸ | 169,000 | | | | |
| 12 | Մկրատ՝ դերձակի | հատ | 200 | 160,000 | | | | | | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 11-րդ չափաբաժիններին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, գների նվազեցման նպատակով 17.06.2019թ. ծանուցվել է բավարար գնահատված և վերոնշյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ 20.06.2019թ. բանակցությունների վարման վերաբերյալ: Սահմանված ժամկետում բանակցություններին ներկայացել է միայն «Էյչ Բի Էն» ՍՊԸ, սակայն առաջարկված գինը թողել է անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 12-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ /ոչ մի հայտ չի ներկայացվել/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Գ. Տերյան)

4.1 20.06.2019թ.՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը «**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ԳԴԱԿ» ՍՊԸ, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սպորտ Սիթի» ՍՊԸ, 6-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Էյչ Բի Էն» ՍՊԸ, 9-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՕՐՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «**ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը */գնահատվում է միայն առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը/:*

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ /*Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահատվում/:*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Գ. Տերյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/43» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը /ապրանքի տեխնիկական բնութագիրը/ հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Վ. Պապյան

**Գնահատող** Գ. Ոհստյան

**Գնահատող** Վ. Բարսեղյան

**Գնումները համակարգող՝** Գ. Տերյան